ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 1075-Ch/2 «05» հունվարի 2026թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 2026-2027 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅԵՐԻ) ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի ապրիլի 28-ի N 700-Ն որոշման 19-րդ կետը, 2011 թվականի օգոստոսի 25-ի N 1295-Ն որոշման 9-րդ կետի 5-րդ ենթակետը և 2026 թվականի մարտի 19-ի N 309-Ն որոշումը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2026-2027 ուսումնական տարվա՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) առկա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրով սփյուռքահայ հանդիսացող օտարերկրյա քաղաքացիների «fs.emis.am» էլեկտրոնային համակարգի միջոցով փաստաթղթերի հայտագրման ժամանակացույցը՝ համաձայն N 1 հավելվածի:

2) Հայաստանի Հանրապետության մասնագիտական կրթական ծրագրեր և, բարձրագույն կրթության կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում (այսուհետ՝ ՀՀ ուսումնական հաստատություններ) 2026-2027 ուսումնական տարվա համար (վճարովի ուսուցմամբ) օտարերկրյա քաղաքացիների (այդ թվում՝ սփյուռքահայերի) «fs.emis.am» էլեկտրոնային համակարգի միջոցով փաստաթղթերի հայտագրման ժամանակացույցը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» (այսուհետ՝ ԿՏԱԿ) պետական ոչ առևտրային կազմակերպությանը (տնօրեն՝ Արտակ Պողոսյան). Ապահովել սույն հրամանի 1-ին կետի 1)-ին և 2)-րդ ենթակետերով

սահմանված ժամանակացույցերին համապատասխան օտարերկրյա քաղաքացի հանդիսացող (այդ թվում՝ սփյուռքահայեր) դիմորդների (այսուհետ՝ Դիմորդներ) փաստաթղթերի հայտագրման գործընթացների կազմակերպումը «fs.emis.am» էլեկտրոնային համակարգի միջոցով:

3. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) արտաքին կապերի և սփյուռքի վարչությանը (պետ՝Արկադի Պապոյան).

1) ապահովել Դիմորդների փաստաթղթերի ընդունման, ուսումնասիրության և հաշվառման գործընթացների կազմակերպումը,

4. ՀՀ ուսումնական հաստատությունների ղեկավարներին՝

Դիմորդների փաստաթղթերի հայտագրումը և ընդունումը իրականացնել բացառապես Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի ապրիլի 28-ի N 700-Ն և օգոստոսի 25-ի N 1295-Ն որոշումներով հաստատված կարգերի պահանջներին և սույն հրամանով հաստատված ժամանակացույցերին համապատասխան:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանին:

ՆԱԽԱՐԱՐ՝ **Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

6/5/2026

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169

Հավելված N 1

Հայաստանի Հանրապետության
կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2026 թվականի հունիսի 5-ի N 1075-Ա/2 հրամանի

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ կառավարության 2026 թվականի մարտի 19-ի N 309-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների 2026-2027 ուսումնական տարվա՝պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) առկա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրով օտարերկրյա քաղաքացի հանդիսացող սփյուռքահայերի փաստաթղթերի հայտագրման

Հ/հ	Կրթական ծրագիր	fs.emis.am համակարգում փաստաթղթեի հայտագրման ժամկետ	Դիմորդների գիտելիքի ստուգում ՀՀ ուսումնական հաստատության կողմից	Դիմորդների գիտելիքների ստուգման արդյունքների ներկայացում Նախարարություն	Նախարարության կողմից ստեղծված հանձնաժողովի նիստի որոշում	Նախարարության գրության ներկայացում ՀՀ ուսումնական հաստատություններ՝ Դիմորդներին հրամանագրելու համար	ՀՀ ուսումնական հաստատությունների կողմից Դիմորդների հրամանագրման և նրանց կացություն տրամադրելու մասին գրության կամ էլեկտրոնային հայտի ներկայացում Նախարարություն	Նախարարության գրության կամ էլեկտրոնային հայտի ներկայացում ՀՀ ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայությանը
1.	Անվճար առկա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրով (հայագիտական, մանկավարժական և արվեստի բնագավառի մասնագիտություններ) օտարերկրյա քաղաքացիների՝ սփյուռքահայ դիմորդների ընդունելության համար	2026թ. հունիսի 22-ից մինչև օգոստոսի 24-ը ներառյալ	2026թ. օգոստոսի 28-ից մինչև սեպտեմբերի 4-ը	մինչև 2026թ.սեպտեմբերի 9-ը	մինչև 2026թ. սեպտեմբերի 14-ը	մինչև 2026թ. սեպտեմբերի 18-ը	մինչև 2026թ. սեպտեմբերի 30-ը	մինչև 2026թ. հոկտեմբերի 12-ը

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության
կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2026 թվականի հունիսի 5-ի N 1075-Ա/2 հրամանի

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ մասնագիտական և բարձրագույն կրթության կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում 2026-2027 ուսումնական տարվա համար (վճարովի ուսուցմամբ) օտարերկրացիների (այդ թվում՝ սփյուռքահայերի) փաստաթղթերի հայտագրման և ընդունման

Հ/Հ	Կրթական ծրագիր	fs.emis.am համակարգում փաստաթղթեի հայտագրման ժամկետ	Դիմորդների գիտելիքի ստուգում ՀՀ ուսումնական հաստատության կողմից և հրամանագրում՝ համաձայն Նախարարության գրության	ՀՀ ուսումնական հաստատությունների կողմից Դիմորդների հրամանագրման և նրանց կացություն տրամադրելու մասին գրության կամ էլեկտրոնային հայտի ներկայացում Նախարարություն	Նախարարության գրության ներկայացում ՀՀ ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայությանը
1.	Վճարովի առկա ուսուցմամբ բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով՝ այդ թվում նախապատրաստական դասընթացում,ընդունելության համար	2026թ. հունիսի 22-ից մինչև սեպտեմբերի 30-ը ներառյալ	մինչև 2026թ. հոկտեմբերի 9-ը	Դիմորդի հրամանագրումից հետո՝ 10-օրյա ժամկետում	մինչև 2026թ. հոկտեմբերի 30-ը
2.	Վճարովի առկա ուսուցմամբ մագիստրոսի կրթական ծրագրով՝ այդ թվում նախապատրաստական դասընթացում,ընդունելության համար	2026թ. հունիսի 23-ից մինչև հոկտեմբերի 15-ը ներառյալ	մինչև 2026 թ. հոկտեմբերի 20-ը	Դիմորդի հրամանագրումից հետո՝ 10-օրյա ժամկետում	մինչև 2026 թ. հոկտեմբերի 30-ը
3.	Վճարովի հեռակա ուսուցմամբ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ընդունելության համար	2026թ. հունիսի 22-ից մինչև հոկտեմբերի 16-ը ներառյալ	մինչև 2026 թ. հոկտեմբերի 22-ը	Դիմորդի հրամանագրումից հետո՝ 10-օրյա ժամկետում	մինչև 2026թ. նոյեմբերի 10-ը
4.	Վճարովի դոկտորական կրթական ծրագրով ընդունելության համար	2026թ. հունիսի22-ից մինչև նոյեմբերի 13-ը ներառյալ	մինչև 2026թ. նոյեմբերի 23-ը	Դիմորդի հրամանագրումից հետո՝ 10-օրյա ժամկետում	մինչև 2026թ. դեկտեմբերի 11-ը

5.	Վճարովի առկա ուսուցմամբ մասնագիտական (արհեստագործական կամ միջին մասնագիտական) կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում,այդ թվում՝ նախապատրաստական դասընթացում,ընդունելության համար	2026թ. հուլիսի 1-ից մինչև օգոստոսի 10-ը ներառյալ	մինչև 2026թ. օգոստոսի 21-ը	Դիմորդի հրամանագրումից հետո՝ 10-օրյա ժամկետում	մինչև 2026թ. սեպտեմբերի 12-ը
6.	Վճարովի հեռակա ուսուցմամբ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ընդունելության համար	2026թ. հուլիսի 1-ից մինչև նոյեմբերի 10-ը ներառյալ	մինչև 2026թ. նոյեմբերի 18-ը	Դիմորդի հրամանագրումից հետո՝ 10-օրյա ժամկետում	մինչև 2026թ. դեկտեմբերի 11-ը